ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2044-Ա «22» մայիսի 2025 թ.

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ 8-ՐԴ ՀԱՐԿԻ 169,1ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության տնօրեն Բաբկեն Սեդրակյանի գրությունը և «Փրոմոուշն» ՍՊ ընկերության դիմումը՝ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող շենքի 8-րդ հարկի 169.1քմ մակերեսով տարածքը վարձակալության տալու թույլտվության մասին:

Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող շենքն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերությանը, տարածքի համար 2011 թվականի մարտի 4-ին կնքվել է հ.724 գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը և 2013 թվականի փետրվարի 15-ին հ.491 համաձայնագիրը, որոնցից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21022013-01-2477 վկայական:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 28-րդ գլխի դրույթներով, հաշվի առնելով գույքի անհատույց օգտագործման պայմանագրի 2.3 կետի 2.3.2 ենթակետը.

1.Թույլատրել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերությանը՝ Բաղրամյան պողոտայի հ.78 հասցեում գտնվող շենքի 8-րդ հարկի 169.1քմ մակերեսով տարածքը, համաձայն կցված սխեմատիկ գծագրի՝ տալ վարձակալության «Փրոմոուշն» ՍՊ ընկերությանը (գրանցման համար՝ 264.110.1040798, ՀՎՀՀ՝ 00190679):

2.Ընդունել ի գիտություն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ և 611-րդ հոդվածների համաձայն՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է

նոտարական վավերացման, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շ. Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ